

ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա ՍՊԸ-ն ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-24/9 ծածկագրով կազմակերպված Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի	
	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
11	«Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ	<p>Կիսաճտքավոր կոշիկներ՝ բաղկացած է քթամասից, մինչև ճտքերի վերևը բարձրացող հետնամասից, ամբողջական կողամասից, փափուկ եզրակից, միջնատակից, հիմնական ներդիրից, հանովի-ղնովի ներդիրից, արտաքին ներբանից, 5 զույգ մետաղական կոճականցքերից, քուղերից: Ճիտքերի բարձրությունը 110մմ+/-2%: Երեսամասը պատրաստված է խոշոր եղջերավոր անասունի բնական սև կաշվից, մշակված անջրաթափանց ծածկույթով: Քթամասի և կրնկամասի կաշվի հաստությունը 1,6-1,8մմ, ճտքերը՝ 1,4-1,6մմ: Քուղերի անցքերը մշակվում են 5 զույգ մետաղական կոճականցքերով, որոնք երեսպատված են պաշտպանիչ շերտով, որը կապահովի խոնավ և ցածր ջերմաստիճանի պայմաններում կորոզիայից: Քուղերը պատրաստված են ամուր, անջրաթափանց սինթետիկ քիմիական մանրաթելից, յուրաքանչյուրի վերջույթները թերմոմշակված են: Հիմնական ներդիրը բաղկացած է իրար սոսնձված 2.0-2.2 մմ հաստության բնական՝ կոշիկի համար նախատեսված ամբողջական սովարաթղթից և նույն հաստության մինչև թաթը շարունակվող սովարաթղթից, որոնց մեջ դրվում է մետաղական սուպինատոր: Կաշվե դետալները հակառակ կողմից պետք է մշակված լինեն տաքացվող սոսնձով գործվածքով, որը կտա երեսամասին հավելյալ ամրություն և կհաղորդի չափավոր ծավալային կայունություն: Ներբանի (տակացուկ) հաստությունը պետք է լինի առնվազն 7.5-8.5</p>

մմ, որից աշխատող (շփվող) շերտը՝ 4.5-5.0 մմ, չշփվող շերտը՝ առնվազն 3.0-3.5 մմ, իսկ կրունկի (գարշապարի) հաստությունը պետք է լինի 20-21 մմ, որից աշխատող (շփվող) շերտը՝ 4.5-5.0 մմ, չշփվող շերտը՝ 15-16 մմ: Կողամասերի առնվազն 9 մմ ապահովում է հետքերի ինքնամաքում: Ամրանում է բարձր ճնշմամբ, սոսնձման եղանակով: Պետք է պատրաստված լինի մաշակայուն թերմոպլաստիկ կաուչուկից: Ներբանը գետնին պետք է հպվի հարթ, առանց ճոճվածքի: Ճտքերի վերնամասը երկկողմանի մշակվում է կաշվով, որի միջուկը մշակվում է 2մմ հաստությամբ ինքնասոսնձվող պոլիէթիլենային փրփուրով: Միջնատակը՝ շնչող, ծակոտկեն գործվածքից որը երեսպատված է առածգական, ծակոտկեն սինթետիկ նյութով, ինչն էլ հաղորդում է կոշիկի ներսի ծածկույթին հավելյալ փափկություն և հարմարավետություն: Հանովի-դնովի ներդիրը պետք է պատրաստված լինի բնական կաշվի և պոլետիլենտան հումքի համադրությունից, ամրացման եղանակը՝ միաձույլ(прямое литье), որը կապահովի հավելյալ ամրություն և երկար օգտագործում: Կոշիկի քթամասը և կրնկամասը պետք է մշակված լինեն պինգ-պոնգ տեսակի թերմոպլաստիկ նյութով, որը կհաղորդի կոշիկին հավելյալ ամրություն և առածգականություն: Կոշիկի կաղապարը պետք է համապատասխանի ԳՈՍՏ 3927-88-ի պահանջներին: Արտաքին տեսքը համաձայնեցվում է Գնորդի հետ: Փաթեթավորումը ստվաթղթե արկղերով, 1 արկղի մեջ 10-15 զույգ, արկղերը՝ պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսը և տարեթիվը: Կոշիկի չափերի քանակները տրամադրվում է Գնորդի կողմից: Արտադրվում է 38-47 չափերի: Մատակարար կազմակերպությունը պարտավոր է իր ֆինանսական միջոցների հաշվին ներկայացնել ՀՀ-ում արտոնագրված, հավաստագրված փորձագիտական լաբորատորիայի կողմից տրված եզրակացություն՝ Պայմանագրով սահմանված տեխնիկական բնութագրի համապատասխանության վերաբերյալ:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Масиси Гарун Кари Фабрика ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ԱԼ ԲԿԵ-ԵԱՃԱՊՁԲ-24/9 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар	
	наименование производителя	технические характеристики
11		